Հանրապետական մանկավարժահոգեբանական կենտրոն

«Հանրակրթական դպրոցների ուսուցիչների և ուսուցչի օգնականների դասավանդման հմտությունների զարգացման ապահովում» ծրագիր

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Դպրոց՝ Վաղարշապատի Զորավար Անդրանիկի անվան N 12

Թեմա՝ ԿԱՊԿՈՒ երեխաների ուսուցման կազմակերպման արդյունավետ ձևերը դպրոցում

Վերապատրաստող, մենթոր՝ Փիրուզա Սարգսյան

Կատարող՝ Ամիրյան Մարինե

Վաղարշապատ 2023

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ.....3

ԹԵՄԱ 1

Ներառական կրթության էությունը և ԿԱՊԿՈՒ երեխաների ուսուցման կազմակերպումը.....5

ԹԵՄԱ 2

Խոսքի ընդհանուր թերզարգացում ունեցող աշակերտի ուսուցման կազմակերպումը Վաղարշապատի Զորավար Անդրանիկի անվան N 12 դպրոցում.....8

ԹԵՄԱ 3 Կառուցողական գործունեության կազմակերպումը.....12

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ.....21

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ.....22

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Հայաստանի Հանրապետությունում կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող անձանց կրթությունը կարգավորվում է <<Կրթության մասին>>, <<Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող անձանց կրթության մասին>>, <<Առանց ծնողական խնամքի մնացած երեխաների սոցիալական պաշտպանության մասին>>, <<Հայաստանի Հանրապետության հաշմանդամների սոցիալական պաշտպանության մասին>> ՀՀ օրենքներով:

Հայաստանում ներառական կրթության համակարգը որպես ազգային քաղաքականություն , պաշտոնապես ընդունվել է 2003 թվականին: Այդ ժամանակից ի վեր տեղական միջազգային բազմաթիվ կազմակերպություններ նախաձեռնել են նոր ընդունված համակարգին համահունչ ծրագրեր՝ ուսուցիչներին և կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաներին օժանդակելու համար: Այդ ջանքերի շնորհիվ այսօր շատ դպրոցներ մ այդ թվում նաև մեր դպրոցը , ապահովում են կրթության առանջնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների ուսումնառությունը:

Ըստ կրթական հետազոտությունների և խորհրդատվությունների կենտրոնի կողմից ուսումնասիրությունների Հայաստանում գործում է ոչ թե ներառական , այլ ինտեգրված կրթություն:Այսինքն , ԿԱՊԿՈՒ երեխան ինտեգրվում է դպրոց, կրթություն է ստանում բոլորի հետ միասին, սակայն նրա նկատմամբ կիրառվում է տարբերակված մոտեցում:

Հետազոտական աշխատանքի նպատակն է բացահայտել ԿԱՊԿՈՒ երեխաների ուսուցման կազմակերպման ձևերը ուսուցման գործընթացում:

Վերոնշյալ նպատակից բխում են հետևյալ խնդիրները՝

1. ուսումնասիրել թեմային առնչվող գիտաուսումնական գրականությունը,

2.գործնականորեն սահմանել ԿԱՊԿՈՒ երեխաների ուսուցման կազմակերպման առանձնահատուկ արդյունավետ ձևերը , առանձնացնել դրան տանող մեթոդներն ու միջոցները,

3.համագործակցել լոգոպեդի հետ և համատեղ օգնել մեր աշակերտին ով ունի կրթության առանձնահատուկ պայմանների կարիք, խոսքի ծանր խանգարումներ, հնչյունահնչութային և խոսքի ընդհանուր թերզարգացում , աջակցել և ճիշտ կազմակերպել նրա կրթությունը:

Հեգտազոտության օբյեկտը խոսքի ընդհանուր թերզարգացում ունեցող աշակերտն է:

Կրթական քաղաքականություն մշակողները պետք է հասկանան, որ ներառական կրթության համակարգը օգուտ է բերում ոչ միայն հատուկ կարիքներով երեխաներին, այլև հասարակության բոլոր խմբերի երեխաներին: Ա. Սվաջյանը գտնում է , որ հասարակության չառանձնացված խմբերի պահանջներին համապատասխանող կրթական քաղաքականությունը հաջողելու ավելի մեծ հնարավորություն ունի: Յուրաքանչյուր առանձին կատեգորիայի համար քաղաքականության մշակումը մեծ ժամանակ ու միջոցներ է խլում և նպաստում է բաժանմանը[1]:

Կրթությունը պետք է համարվի ցանկացած անձի մարդկային ու ֆունկցիոնալ զարգացմանը նպաստող միջոց՝ անկախ ֆիզիկական կամ այլ խոչընդոտներից: Տեսագործնակա հետազոտությունները ցույց են տալսի , որ բազմաթիվ ուսուցիչներ կարծում են , որ կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների ուսուցման համար իրենց անհրաժեշտ է հատուկ կրթություն: Սակայն, փորձը ցույվ է տալիս, որ ԿԱՊԿՈՒ երեխաներին հանրակրթական գործընթացի մեջ ներգրավելու համար անհրաժեշտ է որակյալ , հասկանալի և մատչելի դասավանդում[2]:

Ահա սա ենք մենք ընտրել, որպես հիմք և առաջնորդվել ենք համագործակցությամբ, որի արդյունքում փորձել ենք գտնել ԿԱՊԿՈՒ երեխայի ուսուցման կազմակերպման արդյունավետ ձևեր:

ԹԵՄԱ 1

Ներառական կրթության էությունը և ԿԱՊԿՈՒ երեխաների ուսուցման կազմակերպումը

Ներառական կրթությունը կրթության կազմակերպման ձև է, որը տարբերվում է հատուկ կրթական հաստատություններում *առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող* երեխաների համար առանձնացված ձևով իրականացվող կրթությունից: Այն հենվում է բոլոր երեխաների (այդ թվում նաև կրթության առանձնահատուկ պայմանների կարիք և սոցիալապես սահմանափակ հնարավորություններ ունեցող) կրթություն ստանալու իրավունքի և այն համոզմունքի վրա, որ բոլոր երեխաներին կրթելը հանրակրթական համակարգի պարտականությունն է: Ներառումը ենթադրում է այնպիսի գործընթացի ծավալում, որի նպատակը բոլոր սովորողների, այդ թվում հաշմանդամ և կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող այլ անձանց կրթական կարիքների բավարարումն է: Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող համարվում է այն անձը որի ֆիզիկական և (կամ) մտավոր, հոգեկան զարգացման առանձնահատկությունները խոչընդոտում են կրթական ծրագրերի յուրացմանը և որոնց ուսուցման կազմակերպման համար պահանջվում են համապատասխան հատուկ կրթական ծրագրեր և ուսուցման մեթոդներ, ուսուցման անհատական տեխնիկական միջոցներ, կենսագործունեության միջավայր, ինչպես նաև մանկավարժական, սոցիալական և այլ ծառայություններ՝ առանց որոնց կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող անձի կողմից հանրակրթական և մասնագիտական կրթական ծրագրերի յուրացումը դժվար է կամ անհնար:

Հանրակրթական ուսումնական հաստատությունում ներառական կրթական գործընթացի կառավարման հիմքում ընկած են հետևյալ սկզբունքները.

- Կրթական գործընթացում երեխաներին միմյանցից առանձնացնելու պատճառներ չկան.
- Չի կարելի երեխաների նկատմամբ խտրական վերաբերմունք ցուցաբերել հաշմանդամության կամ սովորելու ընթացքում դժվարություններ ունենալու պատճառով:

Կրթության մեջ ներառումը ենթադրում է բոլոր աշակերտների կրթական կարիքների հավասար գնահատում, դպրոցական ուսումնական և մշակութային, համայնքային միջոցառումներին աշակերտների ներգրավվածության աստիճանի բարձրացում, դպրոցների վարած քաղաքականության համապատասխանեցում աշակերտների բազմազանությանը և առանձնահատկություններին, ուսուցման ընթացքում արհեստական խոչընդոտների վերացում և նրանում բոլոր աշակերտների ներգրավում *(չսահմանափակվելով միայն կրթական հատուկ պայմանների կարիք ունեցողներով)*, աշակերտների միջև առկա տարբերությունները ոչ թե որպես դժվար հաղթահարվող բարդության, այլ որպես կրթական գործընթացին նպաստող հանգամանքի ընդունում, աշակերտների համար դպրոցական պայմանների բարելավում, կրթությունը՝ որպես հասարակության մեջ մարդու լիարժեք ներառման և ինքնադրսևորման կարևորագույն բաղադրամասի ճանաչում:

Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների ուսուցման կազմակերպման ռազմավարությունը կառուցվում է հետևյալ ելակետային դրույթների վրա.

- կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաները մյուսների հետ հավասար իրավունք ունեն հանրակրթական հաստատության ընտրության և պարտադիր պետական կրթական ծրագրերի յուրացման,
- կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաներն իրավունք ունեն օգտվելու հատուկ մանկավարժական, առողջապահական, հոգեբանական, սոցիալական և այլ ծառայություններից՝ անկախ նրանց ընտրած ուսումնական հաստատության տիպից,
- երեխայի համակողմանի և բնականոն զարգացման նպատակով նախընտրելի է նրա կրթության կազմակերպումը առանց ընտանիքից և հասարակությունից առանձնացման[1]:

Ներառական կրթական միջավայր ձևավորելու լավագույն գրավականը *համագործակցային միջավայրի* ստեղծումն է ինչպես դասարանում, այնպես էլ դասարանից դուրս, երբ կրթական գործընթացը կազմակերպվում և իրականացվում է ոչ միայն տվյալ ուսումնական առարկան դասավանդող ուսուցչի, այլև դասարանի բոլոր աշակերտների, անհրաժեշտության դեպքում նրանց ծնողների, հատուկ մանկավարժների, հոգեբանների ներգրավմամբ: Փոխօգնության սկզբունքի վրա հենված խմբային ուսուցման մեթոդների ճիշտ և նպատակային գործադրումը հնարավորություն է ընձեռում ապահովել ոչ միայն համագործակցային ուսումնական միջավայր, այլև բարձրացնում է մատուցվող ուսումնական նյութի ընկալման մակարդակը, աշակերտների միջև ձևավորում են գործնական-ուսումնական և ընկերային օբյեկտիվ հարաբերություններ. աշակերտները ճիշտ են գնահատում ոչ միայն սեփական կարողություններն ու արժանիքները, այլև համադասարանցիներինը: Սոցիալական առումով օբյեկտիվ միջաշակերտական հարաբերությունների առկայության դեպքում, երեխաները սկսում են վերաբերվել կրթական առանձնահատուկ պայմանների կարիք ունեցողներին ոչ թե որպես օգնություն հայցողի, այլ որպես գործընկերոջ: Ներառական կրթության իրականացման գործընթացում կարևորվում է բազմամասնագիտական թիմի գործունեությունը: Բազմամասնագիտական թիմի մեջ ներգրավվում են երեխայի կրթության համար շահագրգիռ տարբեր մասնագետները (դասավանդող ուսուցիչներ, դասղեկ, հատուկ մանկավարժ, հոգեբան, սոցիալական աշխատող, լոգոպեդ), երեխայի ծնողը և համակարգողը: Թիմը գնահատում է ԿԱՊԿՈՒ սովորողի կրթական կարիքները, հայտնաբերում է նրա առողջապահական և սոցիալական այն կարիքները, որոնք կարող են ուղղակի ազդեցություն ունենալ նրա կրթության վրա: Մշակել ենք երեխայի անհատական ուսուցման պլան՝ ուղղված կարիքի բավարարմանը: Այսպիսի մոտեցումը հնարավորություն է տալիս կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխայի կրթությունը կազմակերպել հանրակրթական ընդհանուր դպրոցում՝ անհատական ուսուցման պլանով, իսկ անհրաժեշտության դեպքում՝ հատուկ ծրագրերով:

ԹԵՄԱ 2

Խոսքի ընդհանուր թերզարգացում ունեցող աշակերտի ուսուցման կազմակերպումը Վաղարշապատի Զորավար Անդրանիկի անվան N 12 դպրոցում

Որպեսզի հասնենք ցանկալի արդյունքի մենք սահմանել ենք որոշակի քայլշար.

1. ստեղծել ենք բարյացակամ միջավայր,

2. ապահովել, որ բոլորի ձայները լսելի լինեն,

3. ընտանիքներին ընձեռել ենք թիմի աշխատանքին ակտիվորեն մասնակցելու հնարավորություն,

4. առաջնորդվել ենք մեր աշակերտի անհատական կրթական կարիքներով,

5. աջակցություն ենք ստացել դպրոցի տնօրենից ՝ համատեղ դասավանդման հայեցակարգը դպրոցի աշխատակազմին ներկայացնելով որպես ներառական պրակտիկայում առկա լավագույն մոտեցումներից մեկը։

6. Համատեղ դասավանդում սկսել ենք փոքր քայլերից. նախ վերցրել ենք մեկ առարկա՝ մայրենի, բացահայտել թե որ հնչյուններն է դժվարությամբ աչտաբերում ԿԱՊԿՈՒ աշակերտը, ապա համագործակցել նաև մեր կոլեգաների հետ, որպեսզի այլ առարկաների դասապրոցեսի ժամանակ տեքստում առկա այն բառերը որտեղ կան այդ հնչյունները , հանձնարարի ընթերցել հենց ԿԱՊԿՈՒ աշակերտին, իսկ նրա կողքին է եղել նար լոգոպեդը, ով սեփական գիտելիքների և հմտությունների շնորհիվ աշակերտին մասնակից է դասապրոցեսին։

ԱՂՅՈՒՍԱԿ 1. Հ սովորողի աջակցության մեր տարբերակը.

	Չափորոշիչը	Չափորոշիչ՝ միջավայրային կամ դասավանդման փոփոխություններով	Չափորոշիչ՝ պայմանների տրամադրումով	Չնափոխված
Բացատրություն	Երեխան մասնակցում է դասապրոցեսին։Նրանից	Երեխան մասնակցում է դասապրոցեսին , բայց	Երեխան մասնակցում է դասապրոցեսին , բայց	Նպատակներ, որոնք ստանդարտ չեն , բայց

	ու բոլոր երեխաներից ունեցած ակնկալիքները նույնն են։	ուսուցիչը մի փոքր փոփոխում է դասավանդման մեթոդը, որպեսզի օգնի երեխային	նրա համար փոփոխություններ են արվում հանձնարարությունների ժամանակ, բովանդակության ներկայացման , հանձնարարությունների կատարման համար։	հարկավոր են երեխային՝ հաջողության հասնելու համար։
Օրինակ մեր աշակերտի համար	Չնայած, որ նա ունի ընթերցանության դժվարություններ, նա ունի մաթեմատիկական լավ հմտություններ և բոլոր աշակերտների նման կարող է մասնակցել օրինակ մաթեմատիկայի դասին։	Նա չի կարողանում ճիշտ արտաբերել հնչյունները.հետևաբար թիմի նպատակն է նրան որոշ ժամանակահատվածում սովորեցնել արտաբերել այդ հնչյունները.	Նա դժվարանում է արտաբերել այդ հնչյունները, հետևաբար նրան կտանք նաև առդիո դասեր լսելու հնարավորություն, այն դեպքում, երբ մնացած աշակերտները ինքնուրույն կարողանում են ընթերցել այդ նյութը։	Նա չի կարողանում ճիշտ արտաբերել հնչյունները.հետևաբար թիմի նպատակն է նրան որոշ ժամանակահատվածում սովորեցնել արտաբերել այդ հնչյունները.

ՏՄԱԿ-ի լոգոպեդը ուսուցմանը մասնակից է եղել հետևյալ ուղղություններով.

1. անցկացրել է կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխայի մանրակրկիտ գնահատում.

2. համագործակցել է ընտանիքի և ուսուցչի հետ,

3. մասնակցել է աշակերտի հատկորոշված կրթական կարիքներին համապատասխան շրագրերի փոփոխման և միջամտությունների պլանավորման գործընթացին,

4. իրականացրել է մասնագիտական միջամտություններ, օրինակ զարգացրել է հաղորդակցման հմտությունները, օգնել հաղթահարելու ընթերցանությանն գրելու դժվարությունները ,

5. իրականացրել է շարունակական դիտարկումներ ՝ ուսումնական ծրագրերի փոփոխման նպատակահարմարությունը և միջամտությունների արդյունավետությունը որոշելու համար։

ԿԱՊԿՈՒ երեխայի ուսուցման կազմակերպմանն առնչվող կարևոր նկատառումներ.

Ընտանիքի ներգրավվածությունը.

Ընտանիքի մասնակցությունը ԿԱՊԿՈՒ երեխայի ՝ Ղիմոյան Էդուարդի, ուսուցման արդյունավետ ձևերի որոնման ճանապարհին շատ կարևոր է : Չնայած ուսուցիչն ու

լոգոպեդը լավ գիտեն երեխային, բայց նրա կյանքի փորձագետները նրա ծնողներն են։ ԱՈՒՊ-ը կազմելիս ծնողին խնդրել ենք նկարագրական տեղեկություններ տալ իրենց երեխայի ֆունկցիոնալության ընթացիկ մակարդակների, երեխայի նախասիրությունների, նրա համար տհաճ բաների մասին և այլն։

ԱՂՅՈՒՍԱԿ 2 . երեխան և նկարագրական տեղեկությունները

ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ	ԵՐԱԶԱՆՔՆԵՐ	ՄՏԱՎԱԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ	Ո՞Վ Է…	ԿԱՐԻՔՆԵՐ

Սա հիանալի միջոց է երեխայի ընտանիքի հետ կապ հաստատելու, նրան ավելի լավ ճանաչելու և ուսուցումը ճիշտ կազմակերպելու համար։ Կարծում ենք , որ ուսուցումը պետք է լինի նախ հաճելի և դուրեկան։

X սովորողի ուսուցման կազմակերպման ժամանակ օգտագործել ենք մի շարք մեթոդներ , հնարներ և միջոցներ. օրինակ աուդիոտեքստեր, որոնք լսելով նա փորձել է պատմել և ներկայացնել, իսկ տեքստում առկա են եղել այնպիսի հնչյուններ, որոնք նա դժվարությամբ է արտաբերել։

X սովորողի ներկայացրել ենք նկարը և խնդրել պատմել այն, նկարում կան մի շարք բառեր, որտեղ առկա են ջ-ճ-չ, ժ-շ հնչյունները, իսկ եթե նա փորձել է շրջանցել և ստվերում թողնել այդ բառերը, ապա խնդրել ենք բարձրաձայնել, թե ինչ է այս կամ այն առարկան։ Օրինակ ժ-շ հնչյուններն ուսուցանելիս ներկայացրել ենք այս նկարը.

նկար 1. ժ-շ հնչյուններ.

Քարտային աշխատանքի ժամանակ ներկայացվել են հետևյալ նկարները. սովորել ենք ջ-ճ-չ հնչյունները

նկար 2
նկար 3
նկար 4

Արդյունավետ եղավ հետևյալ առաջադրանքը. Սովորողը պետք է գտներ ճանապարհը , բայց բարձրաձայնելով բոլոր առարկաները

նկար 5. Լաբիրինթ

X սովորողին կարող են օգնել նաև իր դասընկերները և միասին հասնել ցանկալի արդյունքին, նրանց հետ շփման և հաղորդակցման արդյունքում էլ գրանցել ենք որոշակի առաջընթաց: Կիրառելով մի շարք մեթոդներ և հնարներ ուսուցիչն ու լոգոպեդը համագործակցելով ընտանիքի անդամների և դասընկերների հետ , հասել են զգալի արդյունքի: Նա կարողանում է հեշտությամբ արտահայտել ջ-ճ-չ և ժ-շ հնչյունները:

Անփոխարինելի է մնում կառուցողական աշխատանքը, այս բնույթի աշխատանքները հիանալի միջոց են X սովորողի խոսքի զարգացման համար: Մենք կազմակերպել ենք այս բնույթի աշխատանքներ նրա ընկերների համար: Անդրադառնանք X սովորողի կառուցողական գործունեությանը:

ԹԵՄԱ 3 Կառուցողական գործունեության կազմակերպումը

Դպրոցահասակ երեխայի, իսկ ավելի կոնկրետ X սովորողի տարիքում կառուցողական գործունեությունն ունի մի շարք առանձնահատկություններ.

- երեխաները սովորում են, թե ինչպես ուսումնասիրել առարկաները և ինչպես ստեղծել կառույցներ.
- սովորում են մասերի և նյութերի կառուցվածքային հատկությունները.
- ընդլայնվում են ստեղծագործական դրսևորումները

Կրտսեր տարիքի երեխաների կառուցողական գործունեությունը ամենապարզ կառույցների ստեղծումն է, իսկ ավելի մեծ տարիքում դա բարդ և բազմազան գործունեություն է: Հաշվի առնելով վերը նշված հատկանիշները՝ Գ.Ա. Ուրունտաևան և Լ.Վ. Կուցակովը ձևակերպեցին ուսումնական հաստատությունում տեխնիկական և ստեղծագործական կառուցողական գործունեության դասավանդման հիմնական խնդիրները:

Մանկական կառուցողական գործունեության երկու տեսակի առկայությունը՝ ստեղծագործական և տեխնիկական, որոնցից յուրաքանչյուրն ունի իր առանձնահատկությունները, պահանջում է տարբերակված մոտեցում դրանց ղեկավարման հարցում:

Աղյուսակ 3 . «Տեխնիկական կառուցողական աշխատանքի խնդիրները»

Ուսուցման խնդիրներ	
Զարգացնող	1.Ամրապնդել երեխաների կարողությունը ուսումնասիրել և վերլուծել ուսուցչի պատրաստած կառուցողական աշխատանքը, նրանց մեջ առանձնացնելով անվանումը, նշանակումը, կառուցվածքը, դետալները, որոնցից պատրաստված են մասերը, նրանց դիրքը, գույնը: 2. Ցույց տալ երեխաներին կառուցողական նյութի բազմազանությունը, նրանց առանձնահատկությունները և արտահայտչականության միջոցները: 3. Երեխաներին ծանոթացնել արվեստի տեսակ՝ ճարտարապետության հետ,

	նրա առանձնահատկությունների և արտահայտչականության միջոցների։ 4.Երեխաների մոտ զարգացնել աշխատասիրություն, պարտաճանաչություն, նպատակասլացություն, սկսած գործը մինչև վերջ ավարտին հասցնելու ունակություն, արդյունքի հասնելու կարողություն։ 5.Երեխաների մեջ զարգացնել ինքնուրույնություն, նախաձեռնելու, ստեղծագործելու կարողություն, զարգացնել երևակայությունը։
Տեխնիկական	Աշխատանք շինարարական նյութերով Սովորեցնել երեխաներին շինություններ կառուցել դետալների մեծ քանակից, օգտագործելով բազմատեսակ կառուցողական հնարքներ։ Աշխատանք թղթի հետ 1.Սովորեցնել երեխաներին ծալել թուղթը կեսից տարբեր ուղղություններով, լավ հարթեցնելով ծալելու գիծը։ 2.Սովորեցնել երեխաներին աշխատել ըստ օրինաչափության։ 3.Սովորեցնել երեխաներին աշխատել ըստ նմուշի։ 4. Զարդարել ձեռքի աշխատանքները ապլիկացիայի միջոցով, դրա համար օգտագործելով տարատեսակ նյութեր։ Աշխատանք բնական նյութերով Սովորեցնել երեխաներին բնական նյութերով ձեռքի աշխատանք պատրաստելիս մասերը ամրացնել կամ սոսնձել (լուցկի, սոսինձ և այլն)։ Աշխատանք հավելյալ նյութերով Սովորեցնել երեխաներին հավելյալ նյութից պատրաստվող ձեռքի աշխատանքներում մասերը ամրացնել թելի ու ասեղի,սոսնձի և այլնի միջոցով։
Դաստիարակչական	1. Դաստիարակել երեխաների մոտ խմբային աշխատանքի հմտություններ։ Սովորեցնել գալ համաձայնության, կատարել պարտականությունների

	բաշխում, օգտվել մեկ նյութից, ուրախանալ ընդհանուր արդյունքով: 2.Դաստիարակել երեխաների մոտ հետաքրքրություն ճարտարապետական արվեստի հանդեպ, գեղեցիկը և այդ արվեստի արտահայտչականության միջոցները տեսնելու կարողություն:
Կառուցողական խնդիրներ	Ամրապնդել սաների առանձին կառույցներ մեծ քանակի կառուցողական նյութերից կառուցելու կարողությունը:
Կառույցի բովանդակություն	Թղթից և ստվարաթղթից Հավելյալ նյութերից Բնական նյութերից
Ուսուցանելու հնարքները	Գործողության ցուցադրում, առանց նմուշի ցուցադրության, Պատրաստի նմուշի ցուցադրում և ընթացքը, թե ինչպես է պատրաստված հասկանալու առաջարկ, Նմուշի ուսումնասիրություն և վերլուծություն Ձեռքի աշխատանքների և կառույցների վերլուծություն Դիդակտիկ խաղեր և վարժություններ Կառուցողական խնդիրներ

Կրտսեր դպրոցական տարիքի երեխաների առջև դրված է հետևյալ խնդիրը՝ սովորել նախապես ծրագրել իրենց գործողությունների հերթականության ընթացքը՝ ինչ կառուցել, ինչ չափսի է լինելու կառույցը, ինչ կառուցողական նյութեր են անհրաժեշտ դրա համար և այլն: Ապագա կառույցը տեսողական պատկերացնելու ունակությունը, ծրագիրը իրականացնելու համար սեփական դիտարկումները ներգրավելու ունակությունը այս տարիքի երեխաների կառուցողական և մտավոր գործունեության չափազանց արժեքավոր որակ է:

Այս տարիքի երեխաներն ունեն ավելի ընդարձակ և բազմազան խաղային ծրագիր, նրանք ավելի հեշտությամբ են խաղի մեջ իրականացնում իրենց գաղափարները: Նրանց մեջ առաջանում է սեփական ձեռքերով խաղալիքներ

պատրաստելու հետաքրքրությունը, ինչի արդյունքում խաղը հաճախ միաձուլվում է աշխատանքի հետ:

Կառուցողական խաղի և աշխատանքի սերտ կապը հնարավորություն է տալիս տարիքային այս փուլում գտնել մանկավարժական ուղղորդման այնպիսի ուղիներ, որոնցում խաղը, պահպանելով իր խաղային գրավչությունը երեխայի համար, բացում է նրա համար նոր հետաքրքիր գործունեություն՝ աշխատանքը: Նաև այս տարիքում ավելի հեշտ է կառավարել երեխաների ստեղծագործական գաղափարները:

X սովորողի մոտ նկատելիորեն զարգացած են ուշադրությունը, դիտարկման և տեսողական վերլուծության ունակությունները, ինչը հնարավորություն է տալիս նրա հետ ավելի երկար կառուցողական խաղեր, աշխատանքներ իրականացնել: Աստիճանաբար նա կկարողանա հիշել ավելի մեծ ծավալի տեղեկություն:

Համակարգված ուսուցման դեպքում X սովորողի տարիքի երեխաները մեծ հետաքրքրությամբ սովորում է կառուցելու ընթացքը, կառուցում մեծ խանդավառությամբ՝ ձգտելով աշխատանքը հասցնել ավելի կատարյալ տեսքի: Նա կարող է հեշտությամբ նկատել իր կատարած աշխատանքում թույլ տված թերությունները:

Կառուցողական աշխատանքի ընթացքում երեխաների հետ անմիջական կրթական գործունեության կազմակերպումը դրական է ազդում ստեղծագործական կառուցողական խաղերի բովանդակության վրա: Երեխաների շենքերը դառնում են ավելի բազմազան, ավելի բովանդակալից, նրա խաղն ընկերների հետ ավելի հետաքրքիր է դառնում:

Երեխաների ստեղծագործական կառուցողական խաղերում ուրվագծվում են մի քանի կետեր.

1) Երբ խաղը մեծահասակների կառուցողական գործունեությունը նմանակելու բնույթ ունի (օրինակ, երեխաները պատկերում են տուն կառուցելու գործընթացը և, համապատասխանաբար, դերեր են բաշխում միմյանց միջև. ոմանք բերում են շինանյութ, մյուսները կատարում են որմնադրություն, մյուսները՝ զբաղվում են բեռնման և բեռնաթափման գործերով): Ինչպես ցույց է տալիս փորձը, նման խաղերը

հատկապես հաճախ են առաջանում երեխաների շինարարական էքսկուրսիաներից հետո:

Կարևոր մանկավարժական նշանակություն ունի այն , որ երեխաները կառուցողական գործունեության ժամանակ , սովորում են միասին խաղալ, խաղը լցնում են դրական էմոցիաներով, առկա է կենդանի շփում X սովորողի հետ, նա սովորում է խաղալով: Կառուցողական գործունեության զարգացման համար այս խաղերը արժեքավոր են նրանով, որ դրանցում երեխաները սովորում են արտահայտել իրենց տպավորությունները , ինքնուրույն որոշել պլանը, մտածել կառուցողական գործունեության բովանդակությունը, պլանավորել այն և ընտրել անհրաժեշտ նյութը:

2) Երեխաները չեն ընդօրինակում մեծահասակների կառուցողական գործունեությունը, այլ կառուցում են կառույց, որի հետ հետո կարող են խաղալ: Օրինակ՝ շոգենավ են սարքում, հետո ճամփորդություն են խաղում, գազանանոց են սարքում, հետո գազանանոց են խաղում և այլն:

Այստեղ ստեղծագործական և կառուցողական խաղերը այլ հարաբերությունների մեջ են՝ կառուցելու գործընթացը նախորդում է ստեղծագործական խաղին և բխում է զուտ մտածած ծրագրից:

Եթե նման խաղերը դուրս մնան ուսուցչի ցուցումներից, ապա դրանց արժեքը կառուցողական հմտությունների զարգացման առումով շատ սահմանափակ կլինի: Ա.Լ. Լուրիյան կարծում էր, որ այս խաղերը ազդում են երևակայության և խոսքի զարգացման վրա, բայց չեն նպաստում կառուցողական գործունեության զարգացմանը :

Երբ այդ խաղերն անցկացվում են մանկավարժական ղեկավարությամբ, մեծ հնարավորություններ են բացում երեխաների կառուցողական կարողությունների զարգացման համար:

Կարող են օգտագործվել հետևյալ ուղեցույցները.

- Հիշեցում կառուցողական մեթոդների մասին;

- Կառուցվելիք օբյեկտը դիտարկելու առաջարկ կամ այն պատկերող նկարազարդում,
- Հարցերի միջոցով՝ երեխաներին հիշեցում կառույցի առանձին մասերը ;
- Ուշադրություն դարձրեք կառույցի հիմնական մասերին (օրինակ, շոգենավ կառուցելիս հարցրեք. «Ձեր նավը տախտակամած կունենա՞» կամ «Նավապետի կամուրջը պետք է ավելի բարձր դարձնել, որպեսզի նավապետը ավելի լավ տեսնի»);
- Երեխաների համար ակնհայտ դժվարությունների դեպքում բացատրեք և ցույց տվեք, թե ինչպես պետք է կառուցվի մեկը կամ մյուսը.
- Միանալ խաղին՝ առանց դրա բովանդակությունը փոխելու (օրինակ՝ խորհրդով կամ առաջատար հարցով, հիշեցնել, թե ինչպես կարելի է որոշել շենքի չափը, ուրվագծել հետաքրքիր առարկաներ, ճիշտ բաշխել պարտականությունները և այլն)։ Ուսուցչի ակտիվ մասնակցությունը կառուցողական խաղերին հատուկ մտերմություն է ստեղծում երեխաների հետ հարաբերություններում։

3) Կառուցողական խաղերի խումբ, որը բնութագրվում է խաղային սյուժեի բացակայությամբ, դրա հիմնական բովանդակությունը հենց կառուցողական գործընթացն է։

Ուսուցչի համար կարևոր է առաջացնել X սովորողի տարիքի երեխաների հետաքրքրությունը կառուցողական տարբեր նյութերի հանդեպ, դրանք բնական և լրացուցիչ նյութեր են, թուղթ և ստվարաթուղթ։ Նա տեսնելով ընկերների ոգևորությունն էլ ավելի է ոգևորվում։

Այդ տարիքի երեխաները հաճույքով են աշխատում թղթի հետ։ Աշխատանքը իրականացվում է և՛ անհատական, և՛ խմբային ձևերով։

Այս տարիքում աճում են ձեռքի աշխատանքների հանդեպ որակի պահանջները։ Երբեմն պատրաստած ձեռքի աշխատանքին, երեխան չափազանց բարձր գնահատական է տալիս։ Ճիշտ կլինի այդ պահին համեմատության համար ցուցադրել Էդուարդի աշխատանքը կամ նմուշը։

Երեխայի կառուցողական գործունեությունը պետք է ուղղորդվի ուսուցչի կողմից, բայց չպետք է իրականանա մեխանիկորեն, առանց ցանկության և հետաքրքրության։ Ուսուցիչը վատ արդյունքների է հասնում, երբ խնամում է երեխաներին, թելադրելով գործողությունների ընթացքը։ Երեխաների համար բնականաբար այդպես հեշտ կլինի և պարզ, ակտիվ և ինքնուրույն լինելն ավելի բարդ է։ Երեխաների աշխատանքում գլխավորը դժվարությունների հաղթահարումն է, ստեղծագործական բերկրանքը և աշխատանքային հմտությունների ձեռքբերումը։

X սովորողի հետ աշխատելիս շատ կարևոր է լավ խորհուրդը, օգնությունը, աջակցությունը, բայց սեփական կարծիքը չպարտադրելը։

Անհատական մոտեցումը մեծ նշանակություն ունի։ Ինքնագնահատականը և ինքնատիրապետումը զարգացնելու համար երեխային կարելի է առաջարկել «խանութում» խաղալու համար խաղալիք պատրաստել։ Այնուհետև նա փաստացի համոզվում է, որ իրեն դուր է գալիս իր ձեռքի աշխատանքը, անկախ նրանից, թե հասակակիցները «գնում են», թե ոչ, Էդուարդը պետք է համեմատի այն իր ընկերների աշխատանքի հետ, գտնի ձախողումների պատճառները, փնտրի դրանք վերացնելու ուղիներ։

Կարևոր է խրախուսել և ողջունել երեխաների՝ միասին աշխատելու, ինքնուրույն ինչ-որ բան անելու ցանկությունը։ Օրինակ՝ տղաները որոշեցին «Շաղգամ» հեքիաթի համար թղթե գլաններից կերպարներ պատրաստել, իսկ հետո դրանք օգտագործելով՝ երեխաների համար թատրոն ցույց տալ։ «Դու լավ մտածեցիր,- ասում է ուսուցիչը,- եթե իմ օգնության կարիքն ունենաք ես ուրախ կլինեմ օգնել»։

Շատ կարևոր է ստեղծել այնպիսի դրական մթնոլորտ, որ երեխաները հետաքրքրված լինեն, ուշադիր և ակտիվ։ Որևէ աշխատանքի վրա ուշադրություն հրավիրելու համար գործող հնարք է խրախուսանքը։ Օրինակ.

-Կեցցե՛ս տղաս , որ ինքնուրույն հասկացար, որ պետք է սոսնձել պատռված գիրքը։

Ուսուցչի հսկողությամբ երեխան սովորում է անցքեր անել կոների, կաղինների, շագանակների վրա (աշխատում է փայտե տախտակների վրա)։

Հավաքած նյութը դասավորում ըստ տեսակի: Կեչու կեղևը թրջում է երեք ժամ, շերտավորում բարակ թիթեղների մեջ և չորացնելուց հետո դնում մամլիչի տա:

Երեխաները շարունակում են ինքնուրույն ընտրել և փոփոխել բնական նյութը: Կոները պատվում են սոսնձով, որպեսզի չբացվեն: Նրանք նրանց շքեղ տեսք են հաղորդում՝ կտրվածքներ անելով, ծալելով և ցանկացած դիրքում ամրացնելով կպչուն ժապավենով կամ մեկուսիչ ժապավենով (կոնները չորանալուց հետո ժապավենը հանվում է): Կաղնուց, շագանակից, զանազան խոշոր սերմերից ուլունքներ են պատրաստում: Սովորում են կեչու կեղևից, ծղոտից, ընկույզի կեղևից խաղալիքներ պատրաստել: X սովորողի տարիքի երեխաները հաճախ անտարբեր են գեղեցիկ և դեկորատիվ զարդանախշերի, նկարների նկատմամբ: Ուսուցչի խնդիրն է նրանց ուշադրությունը հրավիրել նմուշի վրա, օգնել հասկանալ հեղինակի հաղորդած տրամադրությունը: Միայն այդ դեպքում աշխատանքը պարզ կդառնա, ցանկություն կառաջանա փորձել ինքնուրույն դա անել, որդեգրել հեղինակային տեխնիկան և պատկերման միջոցները: Այսպիսով, հենց մանկավարժներն են դառնում երեխայի ստեղծագործական որոնման առաջին օգնականները:

Ի՞նչն է սնուցում կառուցողական գործունեությունը և ո՞րն է դրա մանկավարժական արժեքը: Շրջապատող իրականության երևույթների կոնկրետ դիտարկումներ, հեքիաթների նկարազարդումներ, կերպարվեստի ալբոմներ՝ այս ամենը այն բովանդակությունն է, որը ներթափանցում է X սովորողի կառուցողական ստեղծագործության մեջ:

Երեխաների կառուցողական գործունեությունը արդյունավետորեն առաջնորդելու համար ուսուցիչը պետք է բարելավի իր տեսական և գործնական գիտելիքների մակարդակը կառուցողական գործունեության դասավանդման մեթոդիկաների վերաբերյալ, իմանա ճարտարապետական և կերպարվեստի առանձնահատկությունները և արտահայտիչ միջոցները, զարգացնել դիզայնի հմտություններն ու կարողությունները; անընդհատ խորացնի մանկավարժական և հոգեբանական գիտելիքները, ծնողներին ներգրավի ուսումնական գործընթացում:

Այնուամենայնիվ, մանկավարժի մանկավարժական հմտությունը մնում է որոշիչ գործոնը, որը ներառում է X սովորողի տարիքի երեխաների կառուցողական

գործունեության ուսուցման մեջ մանկավարժական տարբեր մեթոդների օգտագործումը, և անհրաժեշտ պայմանների ստեղծումը օգնում է ավելի լավ կազմակերպել մանկավարժական գործընթացը:

Այսպիսով, ուսումնական հաստատությունում կառուցողական գործունեության կառավարումը ներառում է.

- առարկայական զարգացող միջավայրի ստեղծում և դրա համապատասխանեցում կիրառվող տեխնոլոգիային (նյութի, գծագրերի, նկարազարդումների, շինարարական սխեմաների կամ արհեստագործական աշխատանքների գծագրերի առկայություն),
- խմբասենյակի ապահովում սարքավորումներով, տեխնիկական և ստեղծագործական կառուցողական գործունեության համար,
- պարապունքների ընթացքում հետաքրքիր և ժամանցային միջավայրի ստեղծում;
- յուրաքանչյուր տարիքային խմբում կառուցողական գործունեության մեթոդական ուղղորդում,
- հոգեբանական և մանկավարժական վերահսկողություն կրթական գործընթացի որակական բնութագրերի վրա (ախտորոշում, երեխաների գիտելիքների գնահատում, աշխատանքների վերլուծություն);
- մանկավարժների մասնագիտական կարողությունների բարձրացում,
- համագործակցում մանկավարժների և ծնողների միջև:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1 Ներառական կրթություն իրականացվող դպրոցներում բոլոր աշակերտների կրթական կարիքներին համապատասխան կրթություն կազմակերպելու համար պահանջվում է ինտենսիվ համագործակցություն։

2. Համատեղ դասավանդում ներառական կրթության համատեքստում հնարավոր է դարձնում աջակցության տրամադրումը բոլոր երեխաներին։

3. ԱՈՒՊ-ը ամենակարևոր գործիքներից է , որով կարելի է օգտվել կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաներին՝ իրականացնելու իրենց կրթության իրավունքը դպրոցում։

4. Հնչյունահնչութային խնդիր ունեցող աշակերտի՝ Հովսեփի, ուսուցման կազմակերպման ձևը հաջողված էր, կիրառված էին մի շարք մեթոդներ և միջոցներ ցանկալի արդյունքին հասնելու համար։

5. Անփոխարինների է դպրոց-ընտանիք և ընտանիք-դպրոց, ուսուցիչ-ծնող, ծնող-ուսուցիչ կապը։

6. Ներառական կրթության իրագործմանն ուղղված բոլոր ջանքերը հենվում են իրավահավասարության գաղափարի վրա. եթե մենք դա անում ենք ելնելով խղճահարությունից կամ բարեգործական մղումներից, երբեք չենք կարող անհրաժեշտ արդյունքի հասնել։

7. Բոլոր երեխաներն էլ կարող են սովորել. պետք է ապահովել համապատասխան պայմաններ նրանց կրթության համար։

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Թադևոսյան Ս. (2016) Անհատական ուսուցման պլանի մշակման մեթոդական-ուղեցույց ձեռնարկ, Երևան,
2. Մնացականյան Ն. Ս. , (2009) Ներառական դասարաններում սովորող երեխաների հիմնախնդրի ըմբռնումը և լուծումը, ուղեցույց ուսուցիչների համար, Երևան,
3. Սմբատյան Լ., Վերդյան Լ., Սարգսյան Լ., «Կերպարվեստի պարապմունքներ» 2015թ.,
4. Սվաջյան Ա. Հ.(2015), Ներառական կրթություն իրականացնող դպրոցներում առկա հիմնախնդիրները։« Ներառական կրթություն. ժամանակակից խնդիրներն ու մարտահրավերները» միջազգային գիտագործնական գիտաժողովի հոդվածների ժողովածու, Երևան
5. Հանրակրթության մասին ՀՀ օրենք
6. https://lib.armedu.am
7. information about interventions , supports, and recommended practices for young children http//www. Dec-sped.org/